16.02.2015թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
իրավաբան պրն Գ. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 13.02.2015թ. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ուղարկված հարցման՝ տրամադրել տեղեկատվություն ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում տեղեկատվության ազատության համար ատասխանատու անձի վերաբերյալ, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լուսինե Ավետիսի Նազարյանը (հեռ. 567462, էլ. հասցե info@cadastre.am):

Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը տեղադրված է կոմիտեի պաշտոնական կայքում (http://www.cadastre.am/page/committee_structure):

Իրավական ակտի պատճենը կցվում է: